ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ 80 ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻՆ ՇՆՈՐՀՎԵԼՈՒ ԵՆ ՄԵԿ ՏԱՐՎԱ ԱՆԴԱՄԱՎՃԱՐԻ ԿԱՆԽԱՎՃԱՐԻ ՀԱՎԱՍՏԱԳՐԵՐ

14.12.2015 12:56

Հարգելի փաստաբաններ,

Ֆրանսիայի Հանրապետության քաղաքացի, ՀՀ փաստաբանների պալատի պատվավոր անդամ, բարերար Ռայմոն Եզեգելյանի և Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի միջև համագործակցության շրջանակներում՝ **Ռայմոն Եզեգելյանը պատրաստակամություն է հայտնել կանխավճարի կարգով վճարել ՀՀ փաստաբանների պալատի նախագահի կողմից սահմանած կարգով որոշված Երևան քաղաքի 80 (ութսուն) փաստաբանների մեկ տարվա անդամավճարները:**

Նշված նախաձեռնության հետ կապված ՀՀ փաստաբանների պալատի նախագահի **10.12.2015թ. թիվ 366-Լ որոշմամբ** հաստատվել է ««**Փաստաբան Եզեգելյան» թոշակի 2016 թվականի շահառուներին որոշելու մասին» կարգը**, համաձայն որի՝ 2016 թվականի շահառուներին որոշելու նպատակով ձևավորված հանձնաժողովը՝ ըստ կարգով նշված առաջնահերթության, նախապատվություն է տալու Երևան քաղաքի հետևյալ փաստաբաններին՝

*1) **60-69 տարեկան փաստաբաններին**՝ ոչ ավել, քան Շահառուների քանակի **երեսուն տոկոսը** (այս խմբում նախապատվությունը տրվում է առավել տարիքով փաստաբաններին).*

*2) **3-րդ կարգի հաշմանդամ փաստաբաններին**՝ ոչ ավել, քան Շահառուների քանակի **քսան տոկոսը** (այս խմբում նախապատվությունը տրվում է առավել վաղ հաշմանդամության կարգ ստացած փաստաբաններին).*

*3) **Երկու կամ ավելի անչափահաս երեխաներ ունեցող փաստաբաններին**՝ ոչ ավել, քան **քսան տոկոսը** (այս խմբում նախապատվությունը տրվում է առավել շատ երեխա ունեցող, իսկ երեխաների հավասար քանակի դեպքում՝ առավել փոքր տարիքի երեխա ունեցող փաստաբաններին).*

*4) **Մեկ ընտանիքի անդամ հանդիսացող փաստաբաններին**՝ ոչ ավել, քան **քսան տոկոսը** (մեկ ընտանիքի անդամ հանդիսացող փաստաբան է համարվում այն փաստաբանը, ում՝ ամուսինը (կինը), հայրը, մայրը, քույրը, եղբայրը, որդին կամ դուստրը նույնպես հանդիսանում է փաստաբան և տվել է իր համաձայնությունը ընտանիքի մյուս անդամին Շահառու գրանցելու համար (ընտանիքի անդամներից կարող է գրանցվել միայն մեկը). այս խմբում նախապատվությունը տրվում է ընտանիքի առավել մեծ տարիքով անդամներին).*

*5) **Ֆրանկոֆոն փաստաբաններին**՝ ոչ ավել, քան **տաս տոկոսը** (այս խմբում նախապատվությունը տրվում է առավել երկար փաստաբանական ստաժ ունեցող փաստաբաններին)։*

Կարգին համապատասխան որոշված ընդհանուրը 80 շահառուներին կտրվեն համապատասխան հավաստագրեր։

Հիշեցնենք ենք նաև, որ 2015 թվականին բարերար Ռայմոն Եզեգելյանի և Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի միջև համագործակցության շրջանակներում՝ մեկ տարվա անդամավճարների կանխավճարների հավաստագրեր էին շնորհվել Հայաստանի Հանրապետության մարզերի 80 փաստաբանների։

Առաջարկվող նորություններ



27.04.2015ՌԱՅՄՈՆ ԵՋԵԳԵԼՅԱՆԻ ԵՎ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԻՋԵՎ ԿՆՔՎԵԼ Է ՀՈՒՇԱԳԻՐ

29.04.2015ՀՀ ՄԱՐԶԵՐՈՒՄ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԾԱՎԱԼՈՂ 80 ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻՆ ՇՆՈՐՀՎԵԼՈՒ Է ՄԵԿ ՏԱՐՎԱ ԱՆԴԱՄԱՎՃԱՐԻ ԿԱՆԽԱՎՃԱՐԻ ՀԱՎԱՍՏԱԳՐԵՐ

10.07.2015ՄԱՐԶԵՐԻ 80 ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐ ՍՏԱՑԵԼ ԵՆ ՌԱՅՄՈՆ ԵՋԵԳԵԼՅԱՆԻ ԹՈՇԱԿԻ ՀԱՎԱՍՏԱԳՐԵՐԸ

18.01.2016ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ 35 ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԿՏՐԱՄԱԴՐՎԻ «ՓԱՍՏԱԲԱՆ ԵՋԵԳԵԼՅԱՆ» ԹՈՇԱԿ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })